# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ

ՄԻՋԵՎ

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՇԵՇՏԱԴՐՄԱՄԲ)

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն),
ի դեմս նախարար Վահրամ Դումանյանի
Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք.Երևան 0010,
Կառավարական տուն N°2
Հեռախոսահամար՝ +374 10 59-96-04,

և

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե),
ի դեմս Հայաստանում պատվիրակության ղեկավար Թիերի Ռիբոյի,
Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զարյան փ. 73/3,
Հեռախոսահամար՝ +374 10-297415,

Այսուհետ առանձին՝ «Կողմ», իսկ միասին՝ «Կողմեր»:

# MEMORANDUM OF UNDERSTANDING

BETWEEN

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT OF THE REPUBLIC OF ARMENIA

AND

THE INTERNATIONAL COMMITTEE OF THE RED CROSS

## AN INTERNATIONAL PARTNERSHIP ON TEACHER CAPACITY DEVELOPMENT IN BASIC PSYCHOLOGICAL SUPPORT (WITH A SPECIAL FOCUS ON THE BORDER COMMUNITIES OF ARMENIA)

The Ministry of Education, Science, Culture and Sport of the Republic of Armenia (hereinafter referred to as the "Ministry"),
represented by Vahram Dumanyan, Minister,

Legal address: Government building N°2, 0010 Yerevan, RA

Telephone: +374 10 59-96-04,

and

The International Committee of the Red Cross (hereinafter referred to as "the Committee"),
represented by Thierry Ribaux, Head of Delegation in Armenia,
Legal address: 73/3 Zarian str., Yerevan, RA
Telephone: +37410-29-74-15,

Hereinafter individually referred to as the "Party" and collectively as the "Parties"

Նպատակ ունենալով ուսուցիչների կարողությունների զարգացման միջոցով բարելավել հոգեբանական տարրական ծառայությունների հասանելիությունը Հայաստանի սահմանամերձ համայնքներում սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում Կողմերը համաձայնում են համագործակցել հետևյալի շուրջ՝

Aiming to increase the accessibility of basic psychological services in Armenia`s bordering communities through developing the capacity of teachers within the framework of this Memorandum of Understanding the Parties agree on the following:

**Հոդված 1. Կիրառման ոլորտը**

2021 թվականից Կողմերը համատեղ իրականացնում են «Աջակցություն սատարողներին» փորձնական ծրագիրը՝ ուղղված հոգեբանական տարրական աջակցության ոլորտում սահմանամերձ համայնքների ուսուցիչների կարողությունների ամրապնդմանը (այսուհետ՝ «Ծրագիր»), ինչպես նկարագրված է սույն Փոխըմբռնման հուշագրի հավելվածում՝ «Հոգեբանական տարրական աջակցության ոլորտում ուսուցիչների կարողությունների ամրապնդում» ծրագրի հայեցակարգ:

**Article 1: Scope of Application**

Starting from 2021 the Parties are jointly implementing the pilot "Help the Helpers" Project (further "the Project") aiming at developing the capacity of teachers in bordering communities in basic psychological skills as described in the Annex of this Memorandum of Understanding - Concept of the program: "Increasing capacity of teachers in basic psychological support".

**Հոդված 2. Տևողությունը**

2.1 Ծրագրի տևողությունը՝ 2021 թվականի օգոստոսից մինչև դեկտեմբեր:

2.2 Սույն փոխըմբռնման հուշագրի ստորագրման պահից հոդվածում 2-ում նշված ծրագիրն իրականացվում է սույն հուշագրի պայմանների համաձայն:

2.3 Սույն փոխըմբռնման հուշագրի շրջանակներում իրականացվող Ծրագիրը կարող է վերսկսվել կամ երկարաձգվել նշված ժամկետից հետո: Ծրագրի երկարաձգումը կամ վերսկսումը կատարվում է Ծրագրի իրականացման արդյունքների հիման վրա՝ Կողմերի գրավոր փոխհամաձայնությամբ:

**Article 2: Duration**

2.1 The Project duration: from August to December 2021.

2.2 From the moment of the signature of this Memorandum of Understanding the project mentioned in Article 2 is implemented in accordance with the terms and conditions of this Memorandum

2.3 The Project implemented within the framework of this Memorandum of Understanding can be renewed or extended after the a/m period. This extension or renewal shall be done upon mutual written agreement between the Parties according to the Project implementation results.

ԿՈՂՄԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

**Կոմիտեն** անկողմնակալ, չեզոք և անկախ մարդասիրական կազմակերպություն է, որի մանդատը զինված հակամարտությունների և բռնության այլ իրավիճակների զոհերին պաշտպանելն ու աջակցելն է: ԿԽՄԿ մանդատը բխում է 1949-ի Ժնևի կոնվենցիաներից, 1977-ի դրանց լրացուցիչ արձանագրություններից և Կարմիր խաչի ու Կարմիր մահիկի միջազգային շարժման կանոնադրություններից:

**Նախարարությունը** գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը: Նախարարությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N661-Լ որոշմամբ հաստատված կանոնադրության համաձայն:

DESCRIPTION OF THE PARTIES

**The Committee** is a neutral, independent, humanitarian organization whose mandate is to protect and assist victims of armed conflict and other situation of violence. Its mandate stems from the Geneva Conventions of 1949, their additional protocols of 1977 and the Statutes of the International Red Cross and Red Crescent Movement.

**The Ministry** is a republican body of executive authority, which elaborates and implements the policy of the Government of the Republic of Armenia in the fields of education, science, culture and sport. The Ministry carries out its activities in accordance with the charter approved by N661-L Decree of the Prime Minister of the Republic of Armenia of June 1, 2019.

**Հոդված 3. Նախարարության պարտավորություններն են.**

1. Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (այսուհետ՝ պատվիրակված կառույց) օգնությամբ կազմակերպել ՀՀ Սյունիքի, Տավուշի մարզերի և Երևանի համապատասխան մասնաճյուղերի անձնակազմի անդամների ընտրությունը՝ ըստ նախապես սահմանված պահաջների (աշխարհագրական, մասնագիտական փորձառության և այլն)՝ դասընթացավարների վերապատրաստմանը մասնակցելու և այլ ուսուցիչների համար համանման դասընթացներ հետագայում վարելու համար:
2. Ապահովել մասնակիցների պատշաճ ներկայությունը Կոմիտեի մասնագետի կողմից կազմակերպված դասընթացի հանդիպումներին:
3. Կոմիտեի հետ սերտ համագործակցությամբ՝ կատարել վերապատրաստման մասնակիցների վերջնական ընտրությունը՝ համատեղ սահմանված ընտրության չափանիշների հիման վրա:
4. Տրամադրել շարունակական արձագանք՝ անհրաժեշտության դեպքում վերապատրաստման դասընթացի բովանդակության բարելավման և համապատասխանեցման համար:
5. Կոմիտեի մասնագետի աջակցությամբ կազմակերպել համապատասխան փորձնական վերապատրաստումները հինգ սահմանամերձ համայնքների դպրոցներում (6 հանդիպում):
6. Տրամադրել փորձաքննություն պատվիրակված կառույցի ներգրավմամբ մշակվող դասընթացի մեթոդական ուղեցույցի աշխատանքներին:
7. Կոմիտեի հետ համագործակցությամբ մշտադիտարկել և վերլուծել ուսուցիչների վերապատրաստման դասընթացների արդյունքները՝ դասընթացի բարելավման և վերջնականացման նպատակով:
8. Նախաձեռնել հաստատված և վերջնականացված վերապատրաստման դասընթացների բովանդակության և նյութերի ներդնումը ուսուցիչների կարողությունների զարգացման ծրագրերում:
9. Համապատասխան ընթացակարգերի համաձայն իրականացնել վերապատրաստման դասընթացի փորձաքննության և երաշխավորման գործընթաց:

**Article 3: The Ministry is responsible for:**

1. With the help of Republican Psychological-Pedagogical Centre (hereinafter the delegated body), organize the selection of staff members from respective branches in Syunik, Tavush regions and Yerevan. In accordance with predefined requirements (geographical, professional background, etc.) for attending training for trainers' workshops and for conducting further similar workshops for teachers.
2. Ensuring the participants' proper attendance of the training sessions conducted by a Committee specialist.
3. Final selection of participants for training of trainers workshops in close cooperation with the Committee, based on jointly defined selection criteria.
4. Providing ongoing feedback on training content and materials for improvement and adjustment, if needed.
5. Ensuring the implementation of the test workshops through trained trainers in five selected border communities (6 sessions) with support of the Committee specialist.
6. Provide examination to the methodological guidelines of the training to be developed together with the delegated body
7. Together with the Committee, monitoring and analysing the outcomes of the teacher trainings for improvement and finalization.
8. Initiate the integration of the tested and finalized training content/materials into the teachers` regular capacity building programs.
9. Conduct process of examination and guarantee for the training program based on relevant procedures.

**Հոդված 4 . Կոմիտեի պարտավորություններն են.**

1. Պատշաճ կերպով իրականացնել նախատեսված վերապատրաստման դասընթացները ընտրված մասնակիցների հետ՝ նախապես սահմանված և փոխհամաձայնեցված ժամանակացույցի համաձայն:
2. Հոգալ ներգրավված մասնակիցների՝ մարզերից Երևան փոխադրման ծախսերը վերապատրաստման դասընթացին նրանց մասնակցությունն ապահովելու

**Article 4: The Committee is responsible for:**

1. Conducting properly planned training activities for the group of selected participants in accordance with the predefined and agreed time schedule.
2. Covering the transportation expenses of the involved participants from regions to Yerevan to attend the training; and from Yerevan to selected regions to conduct

համար, ինչպես նաև Երևանից ընտրված մարզեր նրանց փոխադրման ծախսերը՝ սահմանամերձ համայնքների դպրոցներում ծրագրի փորձնական փուլում դասընթացներ վարելու նպատակով:

3. Հոգալ պլանավորված դասընթացներին առնչվող բոլոր ծախսերը (գրենական պիտույքներ, սուրճի ընդմիջումներ, գիշերակաց):
4. Պատվիրակված կառույցի և Նախարարության հետ սերտ համագործակցությամբ՝ իրականացնել վերապատրաստման դասընթացի մասնակիցների վերջնական ընտրություն՝ համատեղ սահմանված ընտրության չափանիշների հիման վրա:
5. Լրամշակել և վերջնականացնել դասընթացի բովանդակությունը և նյութերը՝ մասնակիցների արձագանքների և առաջարկների հիման վրա:
6. Առաջնորդել և համակարգել դասընթացավարի մեթոդական ուղեցույցի/ ձեռնարկի մշակումը՝ դասընթացի հաստատված և վերջնականացված բովանդակության և նյութերի հիման վրա:
7. Աջակցել հոգեբանական տարրական աջակցության ոլորտում ուսուցիչների կարողությունների զարգացման վերաբերյալ հաստատված ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակմանը:
8. Ուղղորդել և աջակցել հինգ սահմանամերձ համայնքների դպրոցներում ընտրված դասընթացավարների կողմից փորձնական դասընթացների իրականացմանը (6 հանդիպում):
9. Իրականացնել Նախարարության և պատվիրակված կառույցի հետ մշտադիտարկման այցեր համատեղ ընտրված դպրոցներ վերապատրաստման դասընթացների ընթացքում և/կամ հետո:
10. Նախարարության հետ համագործակցությամբ՝ մշտադիտարկել և վերլուծել ուսուցիչների վերապատրաստման դասընթացների արդյունքները՝ դասընթացի հնարավոր բարելավման և հետագա համապատասխանեցման նպատակով:

**Հոդված 5. Գաղտնիությունը**

5.1 Կողմերը պարտավորվում են պահպանել իրենց փոխանցված կամ սույն փոխըմբռնման հուշագրի շրջանակներում իրենց հայտնի դարձած բոլոր փաստաթղթերի, տվյալների, այդ թվում՝ անձնական տվյալների, և արդյունքների գաղտնիությունը և չտրամադրել դրանք որևէ երրորդ կողմի:

**Հոդված 6. Անձնական տվյալների պաշտպանություն**

6.1 Անձնական տվյալների մշակումը կատարվում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ Կոմիտեի կանոնակարգի համաձայն: Վերջինս հիմնված է անձնական տվյալների պաշտպանության ամենախիստ չափորոշիչների վրա: Կոմիտեն կարող է

training sessions in schools of border communities, during the pilot phase of the project.

3. Covering all related expenses for planned training sessions (stationery, coffee break, accommodation).
4. In close cooperation with the delegated body and the Ministry, selecting participants for training of trainers (ToT) based on jointly defined selection criteria.
5. Modifying and finalizing the training content and materials based on the feedback and recommendations provided by training participants.
6. Leading and coordinating the development of the trainer's methodological guide/manual based on the tested and finalized training content and materials.
7. Supporting the publication of finalized training manual for trainers on developing teachers' capacities on providing basic psychological support.
8. Guiding and supporting the implementation of pilot training sessions (6 meetings) by selected trainers in schools of five border communities.
9. Carrying out monitoring visits with the Ministry and the delegated body to the jointly selected schools during and/or after teacher training sessions.
10. In collaboration with the Ministry, monitoring and analysing teacher training outcomes for potential improvements and further adjustments.

**Article 5: Confidentiality**

5.1 Parties undertake to respect the secrecy, and not divulge to any other parties, of all documents, data, including personal data, products, transmitted to them or of which they may become aware in the context of this Memorandum of Understanding.

**Article 6: Protection of Personal Data**

6.1 Processing of personal data will be carried out as prescribed by the Law of the Republic of Armenia on Protection of Personal Data and in accordance with the Committee Rules on Personal Data Protection, which are based on high standards of personal data protection. The Committee shall provide a copy of the said Rules to the Ministry upon request.

Նախարարության պահանջով տրամադրել նշված կանոնակարգի օրինակը:

**Հոդված 7. Տվյալների վերահսկողությունը և մշակումը**

7.1 Կողմերը պարտավորվում են ծրագրի առնչությամբ ցանկացած հրապարակման կամ փաստաթղթի մեջ նշել հետևյալը. «Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջև միջազգային համագործակցության շրջանակներում»:

7.2 Ծրագրի շրջանակներում մշակված, օգտագործված և/կամ հրատարակված նյութերը հանդիսանում են Կողմերի մտավոր սեփականությունը և ենթակա չեն տարածման և/կամ հրապարակման առանց վերջիններիս փոխհամաձայնության:

7.3 Ի լրումն վերոհիշյալի՝ որևէ հրապարակում անելուց առաջ Կողմերը պետք է նախապես ծանոթանան դրա բովանդակությանը:

**Հոդված 8. Դադարեցումը և երաշխիքները**

8.1 Սույն Փոխըմբռնման հուշագիրը կարող է լուծվել հետևյալ դեպքերում.

8.1.1 Վերջինիս գործողության ժամկետի ավարտին, եթե Կողմերը չեն վերսկսում իրենց պարտավորությունները,

8.1.2 Կողմերի փոխհամաձայնությամբ,

8.1.3 Միակողմանիորեն՝ Կողմերից մեկի կողմից, երեսուն (30) օր առաջ հետադարձ ծանուցմամբ պատվիրված նամակով մյուս կողմին այդ մասին ծանուցելու միջոցով, եթե վերջինս չի կատարել իր պարտավորությունները,

8.2 Անհրաժեշտության դեպքում Փոխըմբռնման հուշագիրը կարող է վերանայվել Կողմերի կողմից:

**Հոդված 9. Վեճերի կարգավորման նկատմամբ կիրառելի օրենքները և կանոնակարգերը**

9.1 Սույն Փոխըմբռնման հուշագրի կատարմանն առնչվող ցանկացած վեճ կամ տարաձայնություն լուծվում է բանակցությունների միջոցով:

9.2 Կողմերի միջև համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճը ենթակա է վերջնական և բացառիկ կարգավորման՝ վեճն արբիտրաժին փոխանցելու մասին ծանուցումը ներկայացնելու պահին ՄԱՄԱԻՀ-ի (ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հարցերի հանձնաժողով) գործող արբիտրաժային կանոնների համաձայն: Արբիտրաժի նստավայրը Ժնևում է (Շվեյցարիա), արբիտրաժային վարույթի լեզուն անգլերենն է:

**Article 7: Controllership and processing of Data**

7.1 The Parties undertake to indicate the following on any Project-related publication or document, "The program is implemented in the framework of international cooperation between the International Committee of the Red Cross and the Ministry of Education, Science Culture and Sport of the Republic of Armenia".

7.2 The materials developed, used and/or published within the framework of the Project are the intellectual property of the Parties and are not subject to dissemination and/or publication without the consent of the Parties.

7.3 In addition, no publications shall be issued without the two Parties being expressly informed of its contents beforehand.

**Article 8: Termination and warranties**

8.1 This Memorandum of Understanding can be terminated in one of the following cases:

8.1.1 At the end of its term, if the Parties do not renew their undertakings,

8.1.2 By mutual consent between the Parties,

8.1.3 Unilaterally, by one of the Party because it has observed noncompliance with its obligations by the other Party, with a period of termination notice of thirty (30) days stipulated by a registered letter with acknowledgment of receipt,

8.2 This Memorandum of Understanding can be revised as necessary upon agreement of Parties.

**Article 9: Laws and regulations applicable to disputes**

9.1 Any dispute linked to execution of this Memorandum of Understanding shall be resolved amicably by the Parties.

9.2 Should the parties fail to reach an agreement; final and exclusive settlement will be done by arbitration in accordance with the UNCITRAL (United Nations Commission on International Trade Law) arbitration rules in force on the date when the Notice of arbitration is submitted in accordance with these Rules. The seat of arbitration shall be Geneva, Switzerland and the language shall be English.

**Հոդված 10. Կոմիտեի արտոնությունները և անձեռնմխելիությունը**

10.1 Սույն Փոխըմբռնման հուշագրի մեջ ոչ մի դրույթ չի կարող ուղղակիորեն կամ անուղղակիորեն մեկնաբանվել որպես Կոմիտեի կողմից հրաժարում ներպետական կամ միջազգային օրենսդրության ներքո, այդ թվում՝ Կոմիտեի և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև 1993թ. նոյեմբերի 5-ին ստորագրված «ՀՀ-ում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կարգավիճակի մասին համաձայնագրի» և 2019 թ. հունվարի 30-ի դրա լրացուցիչ արձանագրության հիման վրա կազմակերպությանը և իր անձնակազմին տրված արտոնություններից և անձեռնմխելիությունից:

10.2 Կողմերը համաձայն են, որ սույն Փոխըմբռնման հուշագրի որևէ դրույթ չի կարող ազդեցություն ունենալ Կոմիտեի մարդասիրական գործունեությունը չեզոքության, անկախության և անկողմնակալության սկզբունքներին համահունչ իրականացնելու կազմակերպության կարողության վրա:

**Article 10: Privileges and immunities of the Committee**

10.1 Nothing in this MoU shall be directly or indirectly interpreted as a waiver on the part of the Committee, of the privileges and immunities the Committee and its staff enjoy under national or international law, including under the Agreement between the Government of the Republic of Armenia and the International Committee of the Red Cross on the Status of the International Committee of the Red Cross in the Republic of Armenia signed on 5 November 1993 and the Protocol thereto signed on 30 January 2019.

10.2 The parties agree that nothing in this Memorandum shall affect the ability of the Committee to carry out its humanitarian activities in a neutral, independent and impartial manner.

**Հոդված 11 . Կարմիր խաչի տարբերանշանի կիրառումը**

Նախարարությունը չի կարող որևէ կերպ կիրառել Կոմիտեի տարբերանշանները՝ առանց Կոմիտեի նախապես տրված գրավոր համաձայնության:

**Article 11: Use of the Red Cross Emblem**

The Ministry shall not use the Committee emblems in any way without the prior written approval of the Committee.

**Հոդված 12 . Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս մաժոր)**

Անհաղթահարելի ուժի ազդեցության, այսինքն՝ անկառավարելի հանգամանքների (այդ թվում, բայց ոչ միայն՝ բնական աղետների, համավարակային իրավիճակի, կառավարության կողմից սահմանված սահմանափակումների, այդ թվում՝ ներկրման կամ անհրաժեշտ որևէ այլ արտոնագրի մերժման կամ չեղարկման և/կամ ողջամիտ վերահսկողությունից դուրս որևէ այլ պատճառի) կամ Կոմիտեի կամ Նախարարության համար անվտանգային լուրջ խնդրի դեպքում Կողմերը իրավունք են վերապահում լուծելու սույն Փոխըմբռնման հուշագիրը կամ դրա հիման վրա նախաձեռնած ցանկացած ծրագիր կամ հետաձգելու իրենց պարտավորությունների կատարումը կամ ծրագրի իրականացման ժամկետները:

**Article 12. Force Majeure**

In case of Force Majeure meaning circumstances beyond control (including, but not limited to natural disasters, pandemic situation, Governmental restrictions, including denial or cancellation of import or any other necessary licenses, and/or any other cause beyond the reasonable control) or posing a serious security problem for the Committee and the Ministry staff, the Parties retain the right to terminate this MoU or any project initiated in its basis or delay their commitment or extend the project implementation period.

**Հոդված 13. Լեզուները**

Սույն Փոխըմբռնման հուշագիրը ստորագրվել է երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Եթե սույն հուշագրի անգլերեն լեզվով տարբերակի և հայերեն թարգմանության միջև որևէ հակասություն ծագի, ապա անգլերեն տարբերակը դառնում կարգավորող:

**Article 13: Languages**

This Memorandum of Understanding has been signed in two copies, each copy in Armenian and English languages, both texts are deemed as original. Should any conflict arise between the English language version of this Memorandum and the Armenian translation, the English language version shall be controlling.

Ստորագրվել է ք. Երևանում, 2021թ. օգոստոսի 13 -ին
Signed in Yerevan, on 13, August 2021

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝
For the Ministry of Education, Science, Culture and Sport of the Republic of Armenia:

Վահրամ Դումանյան
Նախարար

Vahram Dumanyan
Minister

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից՝
For the International Committee of the Red Cross:

Թիերի Ռիբո
Պատվիրակության ղեկավար

Thierry Ribaux
Head of Delegation

## ՀԱՎԵԼՎԱԾ՝

*Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության միջև «Միջազգային համագործակցություն հոգեբանական տարրական աջակցության ոլորտում ուսուցիչների կարողությունների զարգացման ծրագիր իրականացնելու վերաբերյալ» փոխըմբռնման հուշագրի ստորագրված ___,_________, 2021թ-ին:*

# «Հոգեբանական տարրական աջակցության ոլորտում ուսուցիչների կարողությունների ամրապնդում» ծրագրի հայեցակարգ

### Ամփոփագիր

Սույն հայեցակարգը նախանշում է «Աջակցություն սատարողներին[1]» Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ինստիտուցիոնալ ծրագրի շրջանակներում 2021 թ. **Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից համատեղ** իրականացվելիք ծրագիրը **Հոգեբանական տարրական աջակցության ոլորտում[2] ուսուցիչների** կարողությունների ամրապնդման վերաբերյալ (սահմանամերձ համայնքների հատուկ շեշտադրմամբ): Ծրագիրը հիմնվում է այն փորձի վրա, որ զինված հակամարտության և/կամ որևէ այլ արտակարգ իրավիճակի, անորոշության կամ սպառնալիքի դեպքում առաջին հերթին հենց տուժած համայնքների բնակիչներն են միմյանց օգնության հասնում: Ուսուցիչները, մասնավորապես, կրկնակի ճնշման տակ են, մի կողմից՝ նրանք առերեսվում են միևնույն դժվարություններին, ինչ և համայնքի մյուս բնակիչները, մյուս կողմից՝ աջակցություն են տրամադրում այլոց իրենց դերի և պատասխանատվության շրջանակներում: Այդ պատճառով հույժ կարևոր է սատարել նրանց, քանի որ դժվարին իրավիճակներում ու հանգամանքներում ուսուցիչներն իրենց էներգիան, ջանքերն ու գիտելիքները ծառայեցնում են իրենց համայնքների կարիքներին: Մասնավորապես՝ հարկ է հզորացնել նրանց առաքելությանն առնչվող կարողությունները՝ կանխարգելելով մասնագիտական և անձնական հուզական այրումը (սպառումը): Հոգեբանական տարրական աջակցության տրամադրման ոլորտում ուսուցիչներին՝ իրենց դերի շրջանակներում սատարելը հատկապես կարևոր ու շոշափելի է՝ հաշվի առնելով հոգեսոցիալական և հոգեբանական ծառայությունների առկայության և մատչելիության պակասը սահմանամերձ համայնքներում, ինչպես նաև բնակչության շրջանում թեմայի ընկալման ու դրա շուրջ բաց քննարկման պատրաստակամության պակասը (խարան):

**Սահմանամերձ համայնքների ուսուցիչների կարողությունների հզորացմամբ**՝ մի կողմից, և **սթրեսի կառավարման ոլորտում համակարգի զարգացմամբ**՝ մյուս կողմից, նախագիծը նպատակ ունի ներդնել հոգեբանական և հոգեսոցիալական տարրական գիտելիքներ ուսուցիչների հիմնական և պարբերական վերապատրաստումներում՝ այս կերպ հասանելի դարձնելով արհեստավարժ հոգեբանական ծառայությունները համայնքի անդամներին:

---

[1]Հոգեբանական և հոգեսոցիալական աջակցության ԿԽՄԿ ուղեցույց, 2003: https://shop.icrc.org/guidelines-on-mental-health-and-psychosocial-support-2807.html?_________store=default&_ga=2.262713103.2023806742.1581661017-1652401813.1500979465

[2] Սույն մեթոդաբանության համատեքստում հոգեբանական տարրական աջակցությունը ներառում է սթրեսային/ճգնաժամային իրավիճակներին հոգեբանական արձագանքների վերաբերյալ տարրական իրազեկվածություն, վստահության մթնոլորտ հաստատելու կարողություններ, ապրումակցման, լսելու և հաղորդակցվելու հմտություններ, սթրեսի հաղթահարման և կանխարգելման արդյունավետ տեխնիկաներ/մեխանիզմների զարգացում ու գործնական կիրառում:

**Նախագիծը բաղկացած է հետևյալ փուլերից՝**

1. Կարողությունների զարգացում համապատասխան պետական մարմինների անձնակազմի համար (ToT), որոնք պատասխանատու են ուսուցիչների վերապատրաստման և կարողությունների զարգացման համար, ինչպես նաև կիրականացնեն մենթորություն և շարունանական վերահսկում,
2. Ուսուցիչների վերապատրաստման դասընթացների համատեղ (Կոմիտե-Նախարարություն) իրականացում մի քանի ընտրված սահմանամերձ համայնքներում,
3. Դասընթացների նյութերի և գործիքների գնահատում, համապատասխանեցում և վերջնականացում. Դասընթացի վարման ձեռնարկներ դասընթացավարների համար,
4. Ուսուցիչների պետական վերապատրաստման ծրագիր և ուսումնական ծրագրում նշված մեթոդաբանության ներդնում:

**Ներածություն**

Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտությունը տասնամյակներ շարունակ մնում է չլուծված՝ ուղեկցվելով պարբերական անկանխատեսելի սրացումներով՝ չնայած 1994 թվականին կնված զինադադարի մասին պայմանագրին: Մոտ 30 տարիների ընթացքում զինադադարի կրկնվող խախտումները և տարբեր ուժգնությամբ տեղի ունեցող ռազմական միջադեպերը շարունակաբար անդրադառնում են հակամարտող կողմերի սահմանամերձ բնակավայրերի քաղաքացիական բնակչության կյանքի վրա՝ բացասաբար ազդելով դնելով նրանց հոգեբանական բարեկեցությունը:
2020 թ. հուլիսի 12-16-ի ռազմական գործողությունները ևս մեկ անգամ վեր հանեցին այն ռիսկերը, որոնց մշտապես ենթարկվում է սահմանամերձ համայնքների բնակչությունը շարունակական և կամայական բռնության և պատերազմական գործողությունների ժամանակ: Ակնհայտ էր, որ առկա ծառայությունները և ռեսուրսները բավարար չեն կարիքներին արձագանքելու համար: Բացի այդ, բնակչությունը բավարար մակարդակով պատրաստված և տեղեկացված չէ լուրջ միջադեպերի ընթացքում և հետո հնարավոր հոգեբանական արձագանքների և հաղթահարման արդյունավետ մեխանիզմների վերաբերյալ:
2020թ. սեպտեմբեր – նոյեմբեր ամիսների հակամարտության 44-օրյա լայնածավալ սրացումը հսկայական հոգեբանական հետևանքներ ունեցավ բնակչության բոլոր շերտերում: Տեղահանումը, ունեցվածքի կորուստը, վիշտը, վիրավորումներն և վնասվածքները, չհստակեցված սահմանագծերով նոր համայնքների ավելացումը և անվտանգությանը սպառնացող պարբերաբար տեղի ունեցող միջադեպերը բնակչության շրջանում սթրեսի և ուժգին վախի պատճառ են դարձել՝ առաջացնելով անպաշտպանվածության զգացում: Հակամարտության ակտիվ փուլից ամիսներ անց անգամ բնակչության տարբեր թիրախային խմբերի շրջանում հոգեկան առողջության լուրջ կարիքներ են առկա, որոնք դեռևս մնում են չհասցեավորված:
Նման անկայուն միջավայրում համայնքներին արհեստավարժ հոգեբանական աջակցություն տրամադրելը ոչ միշտ է իրատեսական ռեսուրսների (ոչ բոլոր դպրոցներն ու համայնքներն ունեն արհեստավարժ և պատրաստված հոգեբաններ), ծառայությունների հասանելիության (ֆինանսներ և ֆիզիկական մատչելիություն) և թեմայի վերաբերյալ իրազեկման պակասի և խարանավորման պատճառով:

**Կրթական համակարգ/դպրոցներ և սթրես**

Այս առումով, հակամարտության ընթացքում և հետո կամ անորոշության ու վտանգի այլ իրավիճակներում **դպրոցի պաշտպանիչ դերը** պետք է շեշտվի, քանի որ դպրոցում.

- Հիմք է ստեղծվում առողջ հոգեսոցիալական գործունեության ու կայունության համար,
- Հնարավոր է դիտարկել և սատարել երեխաների բարեկեցությունը և զարգացումը,

- Սահմանվում են սոցիալական վարքագիծը և դերերը,
- Նպաստավոր միջավայր է հարաբերությունների հաստատման համար,
- Կարող են զարգանալ սթրեսի հաղթահարման դրական մեխանիզմներ:

Հետևաբար, **սահմանամերձ համայնքների դպրոցների ուսուցիչները** կարող են նպաստել իրենց աշակերտների և համայնքի այլ անդամների հոգեբանական և հոգեսոցիալական բարեկեցությանն ու առողջ գործունեությանը: Տուժած համայնքների անմիջական մերձավորությամբ ու նույն միջավայրում աշխատելու և ապրելու փաստով պայմանավորված՝ նրանք հաճախ առաջինն են աջակցություն և սփոփանք տրամադրում արտակարգ կամ կյանքի դժվարին իրավիճակներում՝ շնորհիվ ի պաշտոնե և պարտականության իրենց կողմից վայելած հարգանքի և վստահության: Իրենց աշակերտների համար վստահելի աջակցողի այդ առաջնային դերում ուսուցիչները կարող են նաև որոշարկել իրենց աշակերտների հոգեսոցիալական և հոգեբանական խնդիրները՝ օգնելով նրանց ժամանակին և հոգեբանական ծառայությունների համապատասխան մասնագետների մոտ ուղղորդել, ինչպես նաև ներգրավել անհրաժեշտ ռեսուրսները, հատկապես երբ խոսքը գնում է սթրեսային կամ տրավմատիկ միջադեպից տուժած երեխաների և դեռահասների մասին: Կրթական միջավայրը ոչ միայն նպաստում է հոգեբանական խնդիրների վերաբերյալ համայնքների իրազեկման բարձրացմանը, այլև օգնում է պայքարել թեմայի խարանավորման դեմ:

Երկարատև հակամարտության միջավայրը և դրա վերջին սրացումը դժվարեցնում է այդ հարցը սահմանամերձ համայնքների համար, հոգեսոցիալական առաջնային կարիքները կարող են խորանալ, ուսուցիչները, ովքեր հաճախ իրենք են անտեղյակ բռնությանը կամ սպառնալիքին իրենց հուզական արձագանքների կառավարման վերաբերյալ, կարող են չիմանալ՝ ինչպես աջակցել հոգեբանորեն տուժած անձանց: Այդ պատճառով խիստ կարևոր է ապահովել ուսուցիչների համապատասխան վերապատրաստումը՝ առանց վերջիններիս մոտ գերծանրաբեռնվածություն կամ շփոթմունք առաջ բերելու: Երբ ուսուցիչների բարեկեցությունը տուժում է աշխատանքային սթրեսի, մասնագիտական այրման կամ անբավարար ինքնահոգատարության հետևանքով, դա իջեցնում է իրենց աշխատանքի որակն ու ազդում իրենց աշակերտների ու գործընկերների վրա: Հակամարտության պայմաններում ապրող և աշխատող ուսուցիչներն առերեսվում են նույն վախերին և անորոշությանը, ինչ և իրենց աշակերտներն ու ամբողջ համայնքը, և որոնք կարող են իրենց համար նույնիսկ ավելի սթրեսային ու հուզական առումով դժվար լինել: Հատկանշական է, որ Հայաստանի ուսուցիչների համար դեռևս չի նախատեսվում որևէ մասնագիտացված վերապատրաստում հոգեբանական բարեկեցության, սթրեսի կառավարման կամ հուզական այրման կանխարգելման վերաբերյալ, և ոչ էլ որևէ այլ կոնկրետ միջոց է ձեռնարկվում սահմանամերձ գյուղերի ուսուցիչների համար:

Նոր կորոնավիրուսով պայմանավորված աննախադեպ իրավիճակը ևս մեկ անգամ շեշտեց դպրոցների և ուսուցիչների/խնամատուների դերը իրենց աշակերտների հոգեբանական բարօրության պահպանման և ապահովման հարցում՝ միևնույն ժամանակ բացահայտելով նոր ստեղծված իրավիճակում իրենց աշխատանքային պարտականությունների կատարման հետ մեկտեղ թելադրվող բարձր պահանջներին ու դժվարություններին դիմագրավելու ուսուցիչների մարտահրավերները: Բնական է, որ նման ծայրահեղ և արտառոց իրավիճակում ուսուցիչները մյուսներից ավելի են ենթարկվում սթրեսի և անհանգստության:

**Նախագծի նպատակը**

Հոգեբանական և հոգեսոցիալական բաղադրիչների ներգրավումը **ուսուցիչների հիմնական վերապատրաստման ծրագրում** կարող է մարտավարություն դառնալ՝ անդրադառնալու սահմանամերձ համայնքներում հոգեբանական ծառայությունների պակասին և զարգացնելու ուսուցիչների դիմակայելու կարողությունները արտակարգ և կյանքի դժվար իրավիճակներում: Այդ

իմաստով, կարևորագույն գիտելիքներով ու հմտություններով ուսուցիչների կարողությունների հզորացումը նպաստում է՝

- **Իրենց սեփական դիմակայության ամրապնդմանը** *(ուղղակի ազդեցություն)* և
- **Իրենց աշակերտների ու համայնքի այլ անդամների** բարօրությանը *(անուղղակի ազդեցություն)*:

**Տավուշի մարզպետարանի կողմից** համակարգվող ու վերջերս հայտարարված «*Հոգեբանական դիմակայության և աջակցության համակարգի ստեղծում*» նախաձեռնությանը համահունչ (տե՛ս *«Տավուշի մարզում հոգեբանական դիմակայության և աջակցության համակարգի ստեղծման վերաբերյալ հայեցակարգ»*)՝ դպրոցներում հոգեբանական բարեկեցության ապահովումը կարող է համարվել ոլորտում տարբեր դերակատարների միացյալ ջանքերով ներդրվելիք ավելի մեծ ու բարդ համակարգի հիմնասյուներից մեկը (տարածաշրջանային և ազգային մակարդակով):

Հոգեբանական տարրական հմտությունների վերաբերյալ ուսուցիչներին վերապատրաստելը ներառում է սթրեսային իրավիճակներին կոնկրետ հոգեբանական արձագանքների վերաբերյալ տարրական գիտելիքներ, ապահով միջավայր ստեղծելու և վստահություն կառուցելու տարրական տեղեկություններ, լսելու և հաղորդակցվելու հմտությունների, դրական հաղթահարման մեխանիզմների և հնարների զարգացում, փոխանակում, ու գործնականում կիրառում: Ինքնօգնության պարզ հնարները և խորհուրդները նպատակ ունեն պաշտպանելու անձին սթրեսից և մասնագիտական այրումից:
Մյուս կողմից՝ պետք է հաշվի առնել, որ նախագիծը **հոգեկան առողջության բուժիչ թերապիա կամ հոգեթերապիա չէ,** այլ ուսուցիչների ռեսուրսները զարգացնելու միջոց՝ իրենց դերի շրջանակներում հոգեբանական տարրական աջակցություն տրամադրելու ուղղությամբ, ինչպես նաև ժամանակին ու հասցեական մասնագիտական ծառայությունների ուղղորդման վերաբերյալ ուսուցիչների իրազեկում:

**Նախագծի ռազմավարություն**

Այս առումով, «Աջակցություն սատարողներին» Կոմիտեի ինստիտուցիոնալ ծրագիրը, որը իրականացվում է աշխարհի տարբեր համատեքստներում (օր՝ Ուկրաինայում, Ադրբեջանում, և այլն) և փորձարկվել է Հայաստանի երկու սահմանամերձ համայնքներում, կարող է արդյունավետ հիմք ծառայել նախագծի հետագա զարգացման, տեղայնացման և ընդլայնման համար: Կրթության ոլորտում կառավարական կառույցների (Նախարարության) հետ սերտ համագործակցությունը հատուկ նշանակություն ունի դպրոցներում հոգեբանական բարեկեցությանը նպաստելու և պետական մակարդակով **ավելի երկարաժամկետ արդյունքներ և փոփոխություններ** ապահովելու տեսանկյունից:
Հայաստանի ողջ տարածքում ուսուցիչների և մանկավարժական անձնակազմի վերապատրաստման և կարողությունների զարգացման միջոցառումների համար պատասխանատու <u>Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի</u> և/կամ <u>Կրթության ազգային ինստիտուտի</u> *(որը վերջերս վերանվանվել է «Կրթական զարգացման և նորարարության ազգային կենտրոն»)* հետ համագործակցությամբ (երկուսն էլ գործում են Նախարարության ներքո)՝ Կոմիտեն նախատեսում է վերապատրաստել և պարբերաբար ուղղորդել մի խումբ **դասընթացավարների և մեթոդաբանների** (նրանցից ոմանք՝ հոգեբանության ոլորտում որակավորված) «Աջակցություն սատարողներին» մոտեցման/ռազմավարության վերաբերյալ, որը հետագայում կընդգրկվի սահմանամերձ համայնքներում կիրառվող մեթոդաբանության և երկրի մակարդակով ուսուցիչներիվերապատրաստման շրջանակներում:

**Մեթոդաբանություն և բովանդակություն**

«Աջակցություն սատարողներին» նախագծի կենսաշրջանը բաղկացած է միջինում վեց հանդիպումներից (յուրաքանչյուրը՝ մոտ 1,5- 2 ժամ տևողությամբ), որոնք կազմակերպվելու են շաբաթական մեկ անգամ 10-15 մասնակիցների համար: Խիստ կարևոր է, որպեսզի մասնակիցները հաճախեն դասընթացի բոլոր հանդիպումներին, քանի որ հանդիպումների բովանդակությունը տրամաբանորեն փոխկապակցված է և հաջորդական: Նախագծի կենսաշրջանի ժամանակացույցը կարող է փոփոխվել և համապատասխանեցվել՝ մասնակիցների հարմարության և նախընտրած ժամանակացույցի համաձայն (օրինակ՝ 5-օրյա դասընթաց՝ երկու մոդուլների միջև դադարով, և այլն): Բովանդակությունը և նյութերը ևս կարող են համապատասխանեցվել միջավայրին՝ պահպանելով նախագծի հիմնական թեմաները և նպատակները: Դասընթացը ներառում է երկու հիմնական բաղադրիչ ( մոդուլ՝ **«ինքնօգնություն»,** որը միտված է նվազեցնելու ուսուցիչների) խնամատուների մոտ սթրեսածին խնդիրների առաջացման հավանականությունը և **«ինչպես օգնել մյուսներին»,** որը միտված է հզորացնելու գիտակ և արհեստավարժ ուսուցիչների կարողությունները՝ կանխելու երեխաների և դեռահասների դժվարությունները, վաղ շրջանում որոշարկելու և աջակցելու խնդիրներ ունեցող երեխաներին, ինչպես նաև համագործակցելու ծնողների հետ, անհրաժեշտության դեպքում ուղղորդելու և խորհրդատվություն տրամադրելու նրանց:

## Կոմիտե-Նախարարություն համատեղ նախագծի համար առաջարկվող քայլեր

| Նախագծի փուլեր | Գործողություն | Տևողությունը |
|---|---|---|
| **Քայլ 0** | **Նախապատրաստում** (մասնակիցներ, դասընթացների վայր, և այլն ) | 1 ամիս |
| **Քայլ 1** | **Կոմիտեն նախագծի ամբողջ կենսաշրջանն իրականացնում է մի խումբ դասընթացավարների համար** (առավելագույնը՝ 10 մասնակիցներ), ովքեր աշխատում են Նախարարությանն առընթեր տարբեր կառույցներում (օրինակ՝ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնում և Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոնում) | 2 շաբաթ |
| **Քայլ 2** | **Դասընթացի արդյունքները և գործընթացը գնահատվում և քննարկվում են.**<br>○ Քաղված դասեր և ձեռքբերումներ<br>○ Մշակված բովանդակության և ժամանակացույցի համապատասխանեցման կարիք<br>○ Վերապատրաստման/դասընթացի նյութերի, գործիքների վերջնականացում հայերենով (PowerPoint, օժանդակ նյութեր, այլն) | 1 շաբաթ |
| **Քայլ 3** | **Ուսուցիչների վերապատրաստում՝** մասնակիցների ավելի փոքր խմբի համար (ամենաշատը 5 անդամների համար)<br>○ Մասնակիցների/ուսուցիչների ընտրության չափորոշիչներ<br>○ Կամավոր/անձնական շահ և մոտիվացիա<br>○ Միջբնագավառային տարածաշրջանային ռեսուրսային կենտրոնների անդամներ (Մանկավարժահոգեբանական հանրապետական կենտրոնի մասնաճյուղ)<br>○ Երկու համայնքներում «Սատարողների» կենսաշրջանի իրականացման հարմարություն և մատչելիություն + հետագա գործողություններ) | 1,5 ամիս |
| **Քայլ 4** | **Վեց հանդիպումների (Կոմիտե-Նախարարություն) համատեղ իրականացում**<br>ընտրված 5 համայնքներից յուրաքանչյուրում | 1 ամիս |

| | | |
|---|---|---|
| | ○ հինգ սահմանամերձ համայնքների ընտրություն (ընտրության չափորոշիչները պետք է սահմանվեն)<br>○ Համատեղ հանդիպումների ժամանակացույցի և լոգիստիկայի կազմակերպում (6 հանդիպումների երկու ամբողջական կենսաշրջան) հինգ համայնքներում<br>○ Դասընթացին հաջորդող մեկ-երկու համատեղ հանդիպում յուրաքանչյուր համայնքում մեկ-երկու ամիս հետո<br>○ Գործընթացի և արդյունքների առաջին գնահատում | |
| **Քայլ 5** | Նախագծի **գնահատում, արդյունքների վերլուծություն և ուղեցույցի մշակում** (Կոմիտե, Նախարարություն)<br>• Նախագծի կենսաշրջանի հետագա համատեղ համապատասխանեցում<br>• Դասընթացի նյութերի մշակում մոդուլի/ուղեցույցի ձևաչափով, որը տպվում և տրամադրվում է մասնակիցներին | 2,5 ամիս |
| **Քայլ 6** | Մոդուլի ներառում ուսուցչի հիմնական/պարբերական դասընթացի մեջ<br>• Գնահատման և քաղված դասերի հիման վրա ռազմավարության ընդունման և իրականացման գործելակարգի վերաբերյալ որոշում պետք է ընդունվի | Ըստ պիլոտի արդյունքների և ընթացակարգերի |

## «Աջակցություն սատարողներին» նախագծի կենսաշրջանի օրինակ



## Դասընթացի բովանդակության օրինակ/ 6 հանդիպումների կենսաշրջան

## ՄՈԴՈՒԼՆԵՐ 1 և 2 (Ենթակա է փոփոխման և համաձայնեցման)

### Մոդուլ 1 (Հանդիպում 1-3). «Ինչպես հաղթահարել սթրեսը»

#### Հանդիպում 1. Ներածություն

Մասնակիցներին ներկայացնում են դասընթացի խնդիրներն ու կառուցվածքը և խրախուսում խոսել դասընթացի բովանդակության ու արդյունքների վերաբերյալ իրենց ակնկալիքների մասին: Ակտիվ փոխանակման ձևաչափով մասնակիցները ներկայանում են, ավելին իմանում միմյանց մասին և խոսում ուսուցիչ դառնալու սեփական մոտիվացիայի, մասնագիտության հանդեպ սիրո ու ոգեշնչման աղբյուրների, աշխատանքին առնչվող դժվարությունների և հուսահատության ու դժգոհության պահերի մասին:
Նախնական թեստավորման DASS-21[3] հարցաթերթիկը ելակետային տվյալներ է տրամադրում գիտելիքների նախնական և դասընթացին մասնակցելուց հետո վերջնական գնահատման համար:

#### Հանդիպում 2. Սթրես, սթրեսի տեսակներ, պատճառներ և դրսևորումներ

«Ի՞նչ է սթրեսը» ընդհանուր և մասնավոր թեմայի շուրջ մտագրոհի շրջանակներում մասնակիցներին խրախուսում են խոսել *սթրեսի տարբեր տեսակների (առօրյա սթրես, հետտրավմատիկ կամ կուտակային սթրես, և այլն)*, ինչպես նաև *սթրեսի տարբեր ընդհանուր նշանների ու դրսևորումների (ֆիզիկական, վարքագծային, ճանաչողական, և այլն)* շուրջ: «Սթրեսային քարտեզագրում» վարժությունը նպաստում է տարբեր սթրեսածին գործոնների շուրջ մասնակցի անդրադարձ, մյուսների հետ դրանց համեմատությանը, չգիտակցված գործոնների բացահայտմանը և սթրեսի վերաբերյալ սեփական ընկալումների վերաիմաստավորմանը:

#### Հանդիպում 3. Սթրեսի հաղթահարում

Մտագրոհի միջոցով առանձնացվում և քննարկվում են *անհատական և մշակութային տարբեր հաղթահարման մարտավարություններ*, տարբերակվում են սթրեսի հաղթահարման դրական ու բացասական եղանակներ: Սեփական ռեսուրսների և ուժեղ կողմերի գիտակցումը՝ նոր հմտություններ ու հնարներ սովորելու հետ միասին (օրինակ՝ շնչառական և հանգստացնող վարժություններ), մեծացնում են վստահությունը և օգնում հավասարակշռություն պահպանել դժվար իրավիճակներում, հուզական այրման և այլ դեպքերում:

### Մոդուլ 2 (Հանդիպում 4-6). «Ինչպես օգնել»

